PENAL REFORM INTERNATIONAL

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Եվրոպական բանտային կանոններ

Կարճ ուղեցույց

Եվրոպական բանտային կանոնների կարճ ուղեցույց

Սույն փաստաթուղթը կազմվել է «Միջազգային բանտային բարեփոխումներ» կազմակերպության (PRI) և Եվրոպայի խորհրդի կողմից համատեղ՝ Եվրամիության և Եվրոպայի Խորհրդի ֆինանսական աջակցությամբ:

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

European NMP Forum

Փաստաթղթի բովանդակության միակ պատասխանատուն դրա հեղինակներն են, և պարտադիր չէ, որ այն արտացոլի Եվրամիության կամ Եվրոպայի խորհրդի պաշտոնական քաղաքականությունը:

Հայերեն տարբերակը պատրաստվել է AISPIRA ծրագրի շրջանակում: Ծրագիրը ֆինանսավորվում է Նիդերլանդների Արտաքին գործերի նախարարության կողմից և իրականացվում է Նիդերլանդների հելսինկյան կոմիտեի, «Միջազգային բանտային բարեփոխումներ» կազմակերպության և «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» կազմակերպության կողմից:

Սույն հրապարակումը կարելի է վերանայել, օգտագործել դրա հատվածները, վերադրտադրել և թարգմանել մասամբ կամ ամբողջությամբ, սակայն ոչ վաճառքի կամ առևտրային նպատակներով: Այս տեքստի ցանկացած փոփոխություն պետք է հաստատվի PRI-ի և Եվրոպայի խորհրդի կողմից: Այն օգտագործելիս անհրաժեշտ է հղում անել PRI-ին, Եվրոպայի խորհրդին և այս հրապարակմանը: Հարցերը կարող են ուղղվել հետևյալ հասցեներին. publications@penalreform.org և publishing@coe.int:

Penal Reform International
info@penalreform.org
Twitter: @PenalReformInt
Facebook: @penalreforminternational
www.penalreform.org

Council of Europe
Twitter: @CoE
Facebook: @councilofeurope
www.coe.int

Առաջին անգամ հրապարակվել է 2021թ. սեպտեմբերին:
© Միջազգային բանտային բարեփոխումներ
և Եվրոպայի խորհուրդ, 2022թ.

Գրաֆիկական դիզայնը և նկարազարդումը՝ Ալեքս Վալիի Alex Valy.

Ներածություն

Ինչ են Եվրոպական բանտային կանոնները:

Եվրոպայի խորհրդի կողմից մշակված Եվրոպական բանտային կանոնները սահմանում են բանտերի կառավարման և բանտերում մարդկանց հանդեպ վերաբերմունքի չափանիշներ: Դրանք գործում են Եվրոպայի խորհրդի բոլոր 47 երկրներում և տրամադրում են կարևորագույն ուղղորդում բանտերի աշխատակիցներին առ այն, թե ինչպես պաշտպանել և երաշխավորել մարդու իրավունքները բանտում:

Կանոնները մշակվել են ողջ Եվրոպայից պրակտիկ գործունեությամբ զբաղվող անձանց, փորձագետների և կառավարության պաշտոնյաների ներգրավմամբ: Դրանք տրամադրում են բանտերի կառավարման բոլոր ոլորտների՝ընդունումից մինչև ազատում լավագույն պրակտիկայի մանրամասն ուղղորդում: Դրանք համատեղում են Եվրոպայի խորհրդի և իր մարմինների կողմից մշակված բանտային գլխավոր չափանիշները՝ հավաքագրված կանոնների մեկ գրքում, որին պետության բանտային մարմինները պետք է հետևեն:

Պետական մակարդակում բանտային կանոնների և պրակտիկայի վրա ազդելով՝ Եվրոպական բանտային կանոններն իր հերթին ուղղորդում են, թե ինչպես պետք է բանտի աշխատակազմը աշխատի ամենօրյա հիմունքներով:

> Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:
>
> **Հոդված 3, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա (ՄԻԵԿ)**

2020թ.-ի վերանայում

Բանտային լավ պրակտիկայի և բանտում մարդկանց իրավունքների արդյունավետ պաշտպանության մասին գիտելիքն անընդհատ զարգանում է. այդ պատճառով Կանոն 108-ը պահանջում է, որ Եվրոպական բանտային կանոնները պարբերաբար թարմացվեն: 1973թ.-ից ի վեր կանոնները վերանայվել են չորս անգամ, վերջին անգամ՝ 2020թ.-ին:

Բացի նոր գիտական հետազոտություններից, այս թարմացումները հիմված են նաև Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (ԽԿԿ, տես *Լրացուցիչ աղբյուրներ*) փորձերի վրա, որը տարեկան հարյուրավոր բանտեր է այցելում Եվրոպայում, և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի փորձի վրա, որը որոշումներ է կայացնում բանտում գտնվող անձանց՝ իրենց հանդեպ վերաբերմունքի և հիմնարար իրավունքների մերժման մասին անհատական բողոքների վերաբերյալ:

Կանոնները նաև համահունչ են միջազգային չափանիշներին, քանի որ ՄԱԿ-ի՝ 2015թ.-ի՝ բանտարկյալների հետ վարվեցողության վերաբերյալ Նելսոն Մանդելայի կանոնները հիմնված են եղել ավելի վաղ գոյություն ունեցող Եվրոպական բանտային կանոնների վրա, իսկ 2020թ.-ի վերանայված տարբերակն, իր հերթին, հիմնված է եղել այդ Կանոնների և 2010թ.-ի՝ բանտարկյալ կանանց հետ վարվեցողության վերաբերյալ Բանգկոկյան կանոնների վրա (տես *Լրացուցիչ աղբյուրներ*):

Եվրոպական բանտային կանոնները, հետևաբար, տրամադրում են շրջանակ բանտային մարմինների համար, որը համահունչ է մարդու իրավունքներին և թարմացված է՝ միջազգային զարգացումներին զուգահեռ: Դրանք սահմանում են կարևոր ուղղորդում բանտի աշխատակազմին առ այն, թե ինչպես ինտեգրել այս զարգացումները իրենց առօրյա աշխատանքում:

1. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե, Եվրոպական բանտային կանոններ, վերանայված 2020 (CM/Rec(2006)2-rev), և Եվրոպական բանտային կանոնների Մեկնաբանություն, վերանայված 2020 (CM(2020)17-add2), հասանելի հետևյալ հղումով www.coe.int/en/web/prison/conventions-recommendations.

Ինչպես օգտագործել այս ուղեցույցը

Այս ուղեցույցը սահմանում է Եվրոպական բանտային կանոնների հիմնական պահանջները մի շարք հարցերի վերաբերյալ՝ արձանագրությունները պահելուց և առողջապահությունից մինչև անվտանգություն, ապահովություն և կարգապահություն: 2020թ.-ին փոփոխության ենթարկված կանոնները նշված են «*» նշանով: Բանտերում աշխատող կամ բանտերը մշտադիտարկող անձանց համար նախատեսված լինելով՝ ուղեցույցը տրամադրում է ընդհանուր շրջանակ, որին կարելի է հետևել՝ ապահովելու, որ բանտային ամենօրյա գործընթացներն ու բանտերի աշխատակազմերի և բանտերում աշխատող այլ մասնագետների կողմից իրականացվող գործողությունները լինեն Կանոններին համապատասխան: Ավելի մանրամասն ուղղորդում կարող եք գտնել հենց Եվրոպական բանտային կանոնների տեքստում և դրանց համապարփակ Մեկնաբանությունում:[1]

Որո՞նք են կանոնները:

2020թ.-ի վերանայված տարբերակով փոփոխության ենթարկված կանոնները նշված են հետևյալ նշանով՝ «*»:

Հիմնական սկզբունքներ

Եվրոպական բանտային կանոնները սահմանում են հիմնական սկզբունքներ, որոնք պետք է լինեն բանտերի վարչարարության հիմքը և ուղղորդեն հենց Կանոնների վերլուծությունը:

Մարդու իրավունքների պաշտպանություն [Կանոններ 1 և 2]

Մարդու իրավունքները պետք է մշտապես հարգվեն և պաշտպանվեն: Բանտ մտնելով մարդիկ չեն կորցնում իրենց մարդու իրավուքները, թեև դրանք կարող են սահմանափակվել:

Համաչափություն [Կանոն 3]

Բանտում անձանց վրա կիրառվող ցանկացած սահմանափակում պետք է լինի համաչափ և հետապնդի իրավաչափ նպատակ:

Նորմալիզացում [Կանոններ 4 և 5]

Կյանքը բանտում պետք է հնարավորինս նման լինի համայնքի կյանքին:

Վերաինտեգրում [Կանոններ 6 և 7]

Համայնքին վերաինտեգրումը պետք է լինի կալանքի կառավարման գլխավոր նպատակը: Դրսի սոցիալական ծառայությունների և (հնարավորության դեպքում) քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը խրախուսվում է:

Բավարար և որակյալ աշխատակազմ [Կանոն 8]

Անհրաժեշտ է իրականացնել լավ հավաքագրում, վերապատրաստում և տրամադրել աշխատանքային լավ պայմաններ բանտի աշխատակազմի համար՝ ապահովելու բանտում մարդկանց խնամքի բարձր չափանիշներ:

Հաշվետվողականություն և թափանցիկություն [Կանոն 9]

Բանտերը պետք է պարբերաբար ենթարկվեն ստուգման և անկախ մշտադիտարկման:

Ընդունում և տվյալների պահպանում

Ընդունվելուն պես [Կանոններ 15*, 30.1]

Անհրաժեշտ է գրանցել ընդունման ժամն ու ընդունվող անձի մասին հստակ մանրամասները: Դա ներառում է նրանց ինքնության, տեսանելի վնասվածքների և առողջության մասին կարևոր տեղեկություններ, ինչպես նաև ընտանիքի անդամների կամ մերձավոր հարազատների վերաբերյալ տեղեկություններ: Մարդկանց նաև պետք է տեղեկացնել բանտի կարգապահությունը ղեկավարող կանոնների և նրանց իրավունքների մասին:

Ընդունումից հետո հնարավորինս շուտ [Կանոն 16]

Ընդունման պահին գրանցված առողջության վերաբերյալ տեղեկությունը պետք է լրացվի բժշկական զննմամբ: Ընդունվելուն պես հավաքագրված տեղեկությունը պետք է գնահատվի՝ բավարարելու անհատի անձնական կամ բարեկեցության կարիքները: Անհրաժեշտ է նաև սահմանել նրանց ապահովության հավանական սպառնալիքը և անվտանգության պատշաճ մակարդակը: Դատապարտված անձանց դեպքում պետք է քայլեր ձեռնարկվեն՝ նրանց պատժի համար մշակված պլաններն իրականացնելու համար:

Տվյալների շարունակական պահպանում [Կանոն 16ա*]

Ընդունման ժամանակ հավաքագրված տեղեկությունները պետք է թարմացվեն և հնարավորության դեպքում լրացվեն, և պահվեն գաղտնի: Հետագա տեղեկությունները պետք է հավաքագրվեն անձի կալանքի ընթացքում, այդ թվում՝ պատժի պլանավորման, վարքագծի, ներկայացված դիմումների կամ բողոքների (եթե գաղտնի չեն), ինչպես նաև կարգապահական միջոցների, զսպման միջոցների կամ ինտրուզիվ զննման մասին, որոնց նրանք ենթարկվում են:

Բանտի պայմաններ

Ընդհանուր [Կանոն 4]

Բանտի պայմանները պետք է համապատասխանեն նվազագույն չափանիշին՝ ապահովելու, որ բանտում բոլոր անձանց արժանապատվությունը հարգվի: Այս առումով աշխատակիցները մեծ դեր ունեն: Միջոցների անբավարարությունը երբեք չի կարող արդարացնել մարդու իրավունքները խախտող պայմանները:

Կացարան և տեղաբաշխում [Կանոններ 17-18, 32]

Կացարանը պետք է ապահովի հարգանք մարդու արժանապատվության, անձնական կյանքի գաղտնիության և առողջության նկատմամբ: Դրա համար անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հատակի տարածքին, օդին, լուսավորությանը, ջեռուցման ու օդափոխությանը: Օրինակ՝ պատուհանները պետք է հնարավորություն ստեղծեն մարդկանց համար կարդալ կամ աշխատել բնական լույսի ներքո և (եթե չկա հարմար օդափոխություն) թույլ տան մաքուր օդի մուտքը:

Բանտի տեղափոխման ընթացքում պայմանները պահանջում են, ի թիվս այլնի, բավարար լուսավորություն և օդափոխություն:

Մարդիկ պետք է տեղաբաշխվեն իրենց տներին կամ համայնքներին մոտ հաստատություններում: Տեղաբաշխման համար պետք է հաշվի առնել նրանց ապահովությունը, անվտանգությունը և համապատասխան ռեժիմի առկայությունը:

Ֆիզիկական բարօրություն [Կանոններ 19-22, 25, 27]

Յուրաքանչյուր բանտի բոլոր մասերը պետք է լինեն մաքուր և պատշաճ վիճակում, և մարդիկ պետք է հասանելիություն ունենան սանիտարական և լվացման հարմարություններին (կանանց սանիտարական կարիքների համար հատուկ դրույթով), ինչպես նաև իրենց սեփական անկողնուն: Հագուստը պետք է լինի հարմար կլիմայի, լավ վիճակում և չպետք է լինի նվաստացնող: Բոլորը պետք է ապահովվեն բավարար սնունդով՝ թե քանակապես և թե սննդարար սննդակարգի տեսանկյունից, որը հաշվի է առնում կրոնը և մշակույթը, և մշտապես պետք է հասանելի լինի մաքուր խմելու ջուր:

Բանտային ռեժիմը պետք է ապահովի գործողությունների բալանսավորված ծրագիր և հեշտացնի մարդկային և սոցիալական շփման բավարար մակարդակի ապահովումը: Ի լրումն՝ բանտում բոլոր անձինք պետք է ունենան օրական առնվազն մեկ ժամ բացօթյա վարժությունների հնարավորություն, երբ նրանց կթույլատրվի շփվել միմյանց հետ: Անհրաժեշտ է ներդնել այլընտրանքային միջոցառումներ, եթե եղանակային պայմանները թույլ չեն տալիս բացօթյա վարժություններ:

Աշխատանք բանտում [Կանոններ 26, 100, 105]

Աշխատանքը բանտում չպետք է օգտագործվի որպես պատիժ; այն պետք է ունենա օգտակար բնույթ, ապահովի արդար վարձատրություն, և ներառի մասնագիտական ուսուցում նրանց համար, ովքեր կարող են օգուտ քաղել դրանից: Մարդիկ պետք է ունենան իրենց ստանձնած աշխատանքի ընտրության որոշակի մակարդակ, և աշխատանքի չափանիշները (այդ թվում՝ առավելագույն ժամերը և առողջապահական ու անվտանգային միջոցառումները) չպետք է լինեն ավելի ցածր, քան բանտից դուրս են: Ֆինանսական շահի հետապնդումը չպետք է գերակայի բանտարկյալների շահերին:

Մինչդատական կալանքի տակ գտնվող անձանց կարող է թույլատրվել աշխատել, սակայն նրանցից չպետք է պահանջել աշխատել: Թոշակի տարիքը չլրացած դատապարտյալներից կարող է պահանջվել աշխատել՝ հաշվի առնելով ֆիզիկական և մտավոր պիտանիությունը:

Կրթություն [Կանոններ 28 և 106]

Մարդիկ պետք է հասանելիություն ունենան համապարփակ կրթական ծրագրերի, հատկապես ուշադրություն պետք է դարձվի երիտասարդներին, հատուկ կարիք ունեցողներին և տարրական կրթություն չունեցող անձանց: Դատապարտված անձանց համար կրթական ծրագրերը պետք է փոփոխվեն՝ բանտում իրենց մնալու ժամանակին համապատասխան:

Կապ արտաքին աշխարհի հետ [Կանոններ 23-24, 99]

Բոլորը պետք է թույլատրվեն հնարավորինս հաճախ հաղորդակցվել բանտից դուրս մարդկանց հետ, այդ թվում՝ այցելությունների, նամակների և հեռախոսազանգերի միջոցով: Սա նրանց անձնական և ընտանեկան կյանքի իրավունքի կարևոր բաղադրիչ է և կարևոր

է հոգեկան բարեկեցության համար: Հաղորդակցությունը կարող է ենթարկվել սահմանափակումների կամ մշտադիտարկման, երբ անհրաժեշտ է, օրինակ՝ քրեական հանցագործությունների կանխարգելման համար, սակայն նույնիսկ սահմանափակման դեպքում պետք է թույլատրվի կապի նվազագույն ընդունելի մակարդակ: Անհրաժեշտ է տրամադրել օգնություն՝ արտաքին աշխարհի հետ բավարար կապ պահելու համար:

Բանտում մարդիկ իրավունք ունեն իրավական խորհրդատվություն ստանալ, որը պետք է գաղտնի մնա: Իրավաբան-հաճախորդ գաղտնիության միջամտության միակ բացառիկ հանգամանքն է լուրջ հանցագործությունների կամ բանտի ապահովության և անվտանգության լուրջ խախտումների կանխարգելումը:

Ազատ արձակումը [Կանոններ 33, 107]

Ազատ արձակման պես անհրաժեշտ է վերադարձնել բանտարկյալին պատկանող բոլոր իրերը: Պետք է տրամադրել նույնականացման փաստաթղթերը և աջակցել հարմար կացարան և աշխատանք գտնելու հարցում: Ազատ արձակված անձանց պետք է տրամադրել բավարար միջոցներ՝ ապահովելու, որ նրանք կարողանան բավարարել իրենց անմիջական կարիքները և հասնեն տուն: Ազատ արձակումից առաջ պետք է տրամադրել աջակցություն, այդ թվում՝ պրոբացիոն գործակալությունների, համայնքային գործակալությունների և աջակցության ցանցերի հետ համագործակցությամբ:

Առողջություն

Առողջապահության հասանելիություն [Կանոններ 39-41, 46-47]

Առողջապահական ծառայությունների ողջ շրջանակը, ներառյալ անհրաժեշտ բժշկական, վիրաբուժական և հոգեբուժական ծառայությունները, պետք է հասանելի լինեն բանտում գտնվողներին՝ առանց խտրականության, և լինեն համարժեք բանտից դուրս հասանելի այս ծառայություններին (տես նորմալիզացման սկզբունքը): Անհրաժեշտ է նաև ապահովել ատամնաբույժների և ակնաբույժների հասանելիություն: Կանոնները հավասարապես վերաբերում են հոգեկան և ֆիզիկական առողջությանը: Հետևաբար, բանտի բժշկական ծառայությունը պետք

է անհրաժեշտության դեպքում ապահովի հոգեկան առողջության բուժում և հատուկ ուշադրություն դարձնի ինքնասպանության կանխարգելմանը:

Բժիշկների պարտականությունները [Կանոններ 41-45]

Յուրաքանչյուր բանտ պետք է ունենա առնվազն մեկ որակավորված բժիշկ, ինչպես նաև այլ պատրաստված առողջապահական աշխատակիցներ, և իրականացնի կազմակերպչական գործողություններ՝ ապահովելու, որ բժիշկները հասանելի լինեն հրատապ դեպքերում: Առողջական խնդիրները ախտորոշելուն և բուժում նշանակելուն զուգահեռ՝ նրանք ունեն բազմաթիվ պարտականություններ, այդ թվում՝

- Գրանցել և հաղորդել ցանկացած նշան, որ անձը կարող է ենթարկված լինել բռնության՝ բանտարկյալների շրջանում բռնության կամ աշխատակիցների կողմից վատ վերաբերմունքի արդյունքում;
- Թմրամիջոցներից, այդ թվում՝ ալկոհոլի զրկանքի ախտանշանների շուրջ աշխատանք;
- Հայտնաբերել կալանքի հոգեբանական ազդեցությունները և զեկուցել տնօրենին, երբ անհատի ֆիզիկական կամ հոգեկան առողջությունը լուրջ ռիսկի տակ է ազատազրկման որևէ հանգամանքի, այդ թվում՝ մեկուսի բանտարկության պատճառով;
- Պայմանավորվածություններ ձեռք բերել համայնքային գործակալությունների հետ՝ ազատ արձակվելուց հետո բուժման շարունակության համար;
- Ամեն օր այցելել մեկուսի բանտարկության ենթակա անձանց և տրամադրել արագ բուժօգնություն՝ ըստ իրենց դիմումի;
- Պարբերաբար ստուգել և զեկուցել բանտում հիգիենայի, սանիտարական պայմանների և սննդի որակի մասին (ինչը կարող է նաև իրականացվել մեկ այլ նշանակված մարմնի կողմից) և ձեռնարկել անհապաղ քայլեր՝ բացահայտված մտահոգությունները վերացնելու նպատակով:

Ապահովություն, անվտանգություն և կարգապահություն

Անվտանգություն [Կանոն 51]

Անվտանգության միջոցառումներն ու պայմանները չպետք է լինեն ավելին, քան անհրաժեշտ է: Դրան հասնելու գլխավոր ձևը «**շարժուն (դինամիկ) անվտանգությունն**» է, որը հիմնված է աշխատակազմի՝ հաղորդակցման և փոխգործակցության միջոցով բանտում մարդկանց հետ հարաբերությունների կառուցման վրա:

Շարժուն անվտանգություն
Հայեցակարգ և աշխատանքային մեթոդ, որով աշխատակազմը առաջնահերթություն է տալիս պրոֆեսիոնալ էթիկայի հիման վրա բանտում մարդկանց հետ ամենօրյա հաղորդակցման և փոխգործակցության ստեղծմանն ու պահպանմանը: Դրա նպատակն է ավելի լավ հասկանալ անհատներին և գնահատել այն ռիսկերը, որ նրանք կարող են առաջացնել, ինչպես նաև ապահովել անվտանգություն, ապահովություն և լավ կարգապահություն՝ նպաստելով վերականգնմանը և ազատ արձակման նախապատրաստմանը: Այս հայեցակարգն անհրաժեշտ է հասկանալ անվտանգության առավել լայն հասկացության շրջանակում, որը նաև պարունակում է կառուցվածքային, կազմակերպչական և ստատիկ անվտանգություն (պատեր, պատնեշներ, կողպեքներ, լուսավորություն և սարքավորումներ, որոնք օգտագործվում են մարդկանց անհրաժեշտության դեպքում զսպելու համար):

Ապահովություն [Կանոն 52]

Պետք է լինեն ընթացակարգեր՝ ապահովելու բանտում ամբողջ աշխատակազմի, մարդկանց և այցելուների ապահովությունը: Ձերբակալված անձինք պետք է կարողանան կապ հաստատել աշխատակիցների հետ յուրաքանչյուր պահի, եթե կա ապահովության սպառնալիք: Տես նաև «Ընդունում և տվյալների պահպանում» բաժինը՝ ռիսկերի գնահատման վերաբերյալ:

Անվտանգության և ապահովության հատուկ խստացված միջոցառումներ [Կանոն 53*]

Եթե անձը հատուկ վտանգ է ներկայացնում ապահովության և անվտանգության տեսանկյունից, նա կարող են ենթակա լինել անվտանգության և ապահովության հատուկ խստացված միջոցառումների: Դրանք պետք է կիրառվեն բացառիկ հանգամանքներում՝ առկա ռիսկի հիման վրա՝ անհատների, և ոչ թե խմբերի նկատմամբ, և միայն այնքան ժամանակ, որքան ապահովությունն ու անվտանգությունը հնարավոր չէ պահպանել պակաս սահմանափակող մեթոդով: Նման միջոցառումները պետք է հաստատվեն միայն հստակ ժամանակահատվածով, որից հետո անհրաժեշտ է լրացուցիչ հաստատում, և անհատը պետք է գրավոր ձևով տեղեկացվի՝ ինչպես վիճարկել այդ միջոցառումը:

Կարգապահական միջոցառումներ [Կանոններ 56-63]]

Կարգապահական ընթացակարգերը պետք է օգտագործվեն միայն որպես վերջին հանգրվան, որի փոխարեն հնարավորության դեպքում պետք է օգտագործվեն վերականգնողական միջոցառումներ կամ միջնորդություններ: Պետական օրենսդրությունը պետք է սահմանի՝ ինչ է նշանակում կարգապահական իրավախախտում (որը կարող է միայն ներառել լավ կարգապահության, անվտանգության կամ ապահովության սպառնալիք հանդիսացող գործողություններ կամ անգործություն), սահմանափակի օգտագործման ենթակա կարգապահական միջոցառումների տեսակներն ու տևողությունը, և սահմանի բողոքարկման գործընթացը:

Կարգապահական իրավախախտման մեջ մեղադրվող անձը պետք է արագ տեղեկացվի այդ մասին, և նրան բավարար ժամանակ և միջոցներ, այդ թվում՝ որոշ դեպքերում, իրավական աջակցության հասանելիություն պետք է տրվի պաշտպանություն պատրաստելու համար: Անձը երբեք չպետք է երկու անգամ պատժվի մեկ գործողության համար:

Առանձնացում և մեկուսի բանտարկություն

[Կանոններ 53Ա*, 60.6*]

Մարդիկ բանտում կարող են մեկուսացվել՝ որպես անվտանգության կամ ապահովության հատուկ խստացված միջոցառում կամ կարգապահական պատճառներով: Ամեն դեպքի համար գործում են տարբեր կանոններ: Առանց իմաստալից մարդկային հաղորդակցման 22 ժամից ավել մեկուսացումը հանդիսանում է «մեկուսի բանտարկություն», ինչը մեկուսացման ծայրահեղ տեսակ է, որը կարող է վնասել անձի ֆիզիկական և հոգեկան առողջությունը: Այս միջոցառումը կարող է միայն բացառիկ դեպքերում և խիստ երաշխիքների ենթակա լինելով կիրառվել որպես կարգապահական պատիժ՝ հնարավորինս կարճ ժամկետով:

Արդյո՞ք այս անձը մեկուսացվել է որպես **Կարգապահական միջոցառման** կիրառում, թե (իր կամ այլոց) **ապահովության/անվտանգության** համար:

Կարգապահական միջոցառում

→ Արդյո՞ք անձը մեկուսացված է առանց իմաստալից մարդկային հաղորդակցման օրական 22 ժամից ավել:

Այո

→ Սա **մեկուսի բանտարկություն է՝ որպես կարգապահական միջոցառում**, ինչը պետք է բացառիկ դեպքերում լինի:

Գործում են մեկուսացնելու և կարգապահության վերաբերյալ ընդհանուր կանոնները (**Կանոն 53Ա** & **Կանոններ 56-63**) ինչպես նաև **Կանոն 60.6**-ում սահմանված կոնկրետ պահանջները:

Ոչ

→ Սա **մեկուսացում է որպես ապահովության/անվտանգության հատուկ խստացված միջոց**, սակայն չի հանդիսանում (**Կանոն 53**) և **մեկուսացման մասին կոնկրետ կանոնը** (**Կանոն 53Ա**):

Անվտանգություն/ապահովություն

→ Արդյո՞ք անձը մեկուսացված է առանց իմաստալից մարդկային հաղորդակցման օրական 22 ժամից ավել:

Այո

→ Սա հանդիսանում է **մեկուսի բանտարկություն.** միջոցառում, որը նախատեսված չէ **Կանոն 53Ա**-ով:

Այս կանոնները սահմանում են, որ մեկուսացված բոլոր անձինք պետք է ամեն օր առնվազն 2 ժամ իմաստալից մարդկային շփման հնարավորություն ունենան:

Ոչ

→ Սա **մեկուսացում է որպես կարգապահական միջոցառում**, սակայն չի հանդիսանում մեկուսի բանտարկություն:

Գործում են կարգապահության մասին ընդհանուր կանոնները (**Կանոններ 56-63**):

Մեկուսացումը որպես անվտանգության կամ ապահովության հատուկ խստացված միջոցառում

[Կանոն 53Ա*]

Ի լրումն անվտանգության և ապահովության հատուկ խստացված միջոցառումների ընդհանուր պահանջների, գործում են այլ կանոններ մեկուսացման՝ որպես անվտանգության կամ ապահովության հատուկ խստացված միջոցառման դեպքում: Համաչափությունը խիստ կարևոր է.սահմանափակումները պետք է լինեն այն նվազագույն անհրաժեշտը, որով կարելի է հասնել մեկուսացման նպատակներին, և պետք է պարբերաբար վերանայվեն՝ համաձայն յուրաքանչյուր գործի նպատակների՝ գնահատելու շարունակության անհրաժեշտությունը: Մեկուսացված անձինք նաև պետք է ունենան բողոք ներկայացնելու իրավունք (տես Բողոքներ): Անձին մեկուսացնելու որոշումը պետք է նաև հաշվի առնի նրանց ֆիզիկական և հոգեկան առողջությունը և նրանց հաշմանդամությունը, որը կարող է վատթարացնել մեկուսացման հավանական բացասական ազդեցությունը առողջության վրա:

Եթե անձը մեկուսացվում է անվտանգության կամ ապահովության պատճառներով, նա պետք է ունենա օրական առնվազն երկու ժամ մարդկանց հետ իմաստալից հաղորդակցման հնարավորություն: Մարդկային շփման «իմաստալից» լինելը կախված է փոխգործակցության որակից և հոգեբանական ստիմուլյացիայի մակարդակից: Որպեսզի հաղորդակցումը լինի իմաստալից, այն պետք է լինի առերես, «ավելին քան կարճ կամ պատահական» և չպետք է սահմանափակվի առօրյա բանտային կյանքի մաս կազմող սովորական շփումներով (տես Կանոնների մեկնաբանություն, Կանոն 53Ա, *Լրացուցիչ ռեսուրսներ*):

Մեկուսացված անձինք պետք է ամեն օր այցելություն ունենան, այդ թվում՝ բանտի տնօրենի կամ նրա անունից հանդես եկող աշխատակցի կողմից: Եթե մեկուսացումը բացասաբար է անդրադառնում անձի առողջության վրա, այն պետք է կասեցվի կամ փոխարինվի պակաս սահմանափակող միջոցառմամբ: Որքան երկար է անձը մեկուսացված, այնքան շատ քայլեր պետք է ձեռնարկվեն՝ հեշտացնելու նրա հաղորդակցումը այլոց հետ և տրամադրելու միջոցներ ու գործողություններ՝

մեղմացնելու մեկուսացման վնասակար ազդեցությունները: Միջոցներն ու գործողությունները պետք է ներառեն, առնվազն մեկուսացման հենց սկզբից, ընթերցանության նյութերի հասանելիություն և օրական առնվազն մեկ ժամ վարժության հնարավորություն:

Մեկուսի բանտարկությունը որպես կարգապահական պատիժ [Կանոն 60.6*]

Մեկուսի բանտարկությունը սահմանվում է որպես ձերբակալված անձանց բանտարկություն օրական ավելի քան 22 ժամով՝ առանց մարդկանց հետ իմաստալից շփման: Այն երբեք չպետք է օգտագործվի երեխաների, հղի կանանց, կրծքով կերակրող մայրերի, բանտում երեխայի հետ գտնվող ծնողների կամ հոգեկան կամ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց դեպքում, երբ նրանց խնդիրը կարող է վատթարանալ մեկուսի բանտարկության հետևանքով: Այն կարող է օգտագործվել միայն բացառիկ դեպքերում և երբեք չպետք է հանդիսանա խոշտանգում կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք կամ պատիժ:

Մեկուսի բանտարկությունը կարող է իրականացվել հստակ ժամանակահատվածով և սահմանափակ է պետական օրենսդրությամբ սահմանված առավելագույն ժամանակահատվածով: Այս անձինք պետք է այցելություն ունենան ամենօրյա ռեժիմով, այդ թվում՝ բանտի տնօրենի կամ նրա անունից գործող աշխատակցի, ինչպես նաև բժիշկների կողմից, և նրանց բանտարկությունը պետք է դադարեցվի կամ կասեցվի, եթե նրանց հոգեկան կամ ֆիզիկական վիճակը վատթարանում է:

Ուժի և զսպման միջոցների օգտագործում [Կանոններ 64-68]

Ուժ կարող է օգտագործվել աշխատակիցների կողմից միայն ինքնապաշտպանության մանրամասն ընթացակարգերով, փախուստի փորձի դեպքերում կամ իրավաչափ հրամանի դիմադրության դեպքում: Այն մշտապես պետք է լինի վերջին միջոցը, և պետք է օգտագործվի պահանջվող ուժի միայն նվազագույն մակարդակը. աշխատակազմը պետք է պատրաստված լինի՝ տիրապետելու նվազագույն ուժի օգտագործման տեխնիկաների:

Զսպման գործիքները կարող են օգտագործվել միայն օրենքով լիազորված լինելու դեպքում, կամ երբ ավելի քիչ հսկողության ձևը արդյունավետ չի լինի: Դրանք երբեք չպետք է օգտագործվեն ծննդաբերության ցավերի մեջ գտնվող կամ ծննդաբերող կանանց դեպքում, կամ ծննդաբերությունից անմիջապես հետո: Զսպման այս մեթոդը պետք է լինի հնարավորինս ամենաքիչ ինտրուզիվը, և զսպման միջոցները պետք է վերացվեն, երբ ռիսկն այլևս չկա: Զսպման միջոցների օգտագործման յուրաքանչյուր դեպք պետք է գրանցվի գրանցամատյանում:

Ձեռնաշղթաներ, զսպաշապիկներ և մարմինը զսպող այլ պարագաներ կարող են օգտագործվել միայն տեղափոխման ընթացքում փախուստը կանխելու նպատակով կամ բանտի տնօրենի կարգադրությամբ՝ կանխելու անձին կամ այլոց վնաս պատճառելը, ինչի դեպքում բժիշկը պետք է անմիջապես ծանուցվի այդ մասին: Զսպման նվաստացնող ձևերը, ինչպիսիք են շղթաներն ու երկաթները, երբեք չպետք է օգտագործվեն:

Դիմումներ և բողոքներ [Կանոն 70]

Բանտում գտնվող մարդիկ պետք է հնարավորություն ունենան դիմումներ կամ բողոքներ ներկայացնել թե ներքին մարմիններին, ինչպիսիք են բանտի տնօրենը, թե արտաքին՝ իրավասու մարմիններին, ինչպիսիք են տեսչական կամ մշտադիտարկող մարմինները: Համակարգերն ու ընթացակարգերը պետք է ապահովեն, որ գրաքննության կամ գաղտնիության խախտման ռիսկ չլինի: Նրանք չպետք է ենթարկվեն բռնաճնշումների կամ պատժամիջոցների՝ դիմում կամ բողոք ներկայացնելու համար: Համապատասխան մարմինները նաև պետք է հաշվի առնեն ընտանիքներից կամ աջակցության ցանցերից ստացված բողոքները:

Աշխատակիցներն ունեն փոքր դիմումները կամ բողոքները լուծելու կարևոր դեր՝ ավելի լուրջ խնդիրները մեղմացնելու նպատակով: Պետք է պահել դիմումների և բողոքների գրանցամատյան, և դրանցով պետք է զբաղվել որքան հնարավոր է շուտ՝ ապահովելով համապատասխան անձանց մասնակցությունը: Եթե դիմումը կամ բողոքը մերժվում է, անհրաժեշտ է տրամադրել դրա պատճառները և պետք է լինի այն անկախ մարմին բողոքարկելու հնարավորություն:

Հատուկ կարիքներով խմբեր

Կանայք [Կանոն 34*]

Կանոնները պահանջում են կոնկրետ գենդերազգայուն քաղաքականությունների իրականացում, ինչպես նաև պոզիտիվ միջոցառումներ բոլոր ոլորտներում՝ բանտարկյալ կանանց կարիքները բավարարելու համար:

Կանանց կալանավորման վրա ազդող որոշումներ կայացնելիս հատուկ ուշադրություն պետք է դարձնել նրանց ֆիզիկական, մասնագիտական, սոցիալական և հոգեբանական կարիքներին, ինչպես նաև խնամատարության պարտականություններին:

Անհրաժեշտ է ներդնել հատուկ ջանքեր՝ բանտում կանանց ֆիզիկական, հոգեկան կամ սեռական շահագործումից պաշտպանելու համար, և եթե կանայք վերապրել են նման շահագործում, նրանք պետք է հասանելիություն ունենան մասնագիտացված ծառայությունների, այդ թվում՝ հոգեբանական աջակցության կամ խորհրդատվության, և համապատասխան բժշկական խորհրդատվության:

Երեխաներ [Կանոն 35]

Երեխաները (18 տարեկանից ցածր անձինք) չպետք է ձերբակալվեն մեծահասակների բանտերում: Անչափահաս իրավախախտների վերաբերյալ եվրոպական կանոնները (տես *Լրացուցիչ ռեսուրսներ*) տրամադրում են մանրամասն կանոններ իրավախախտման մեջ մեղադրվող կամ դատապարտված երեխաների կառավարման վերաբերյալ: Երբ, բացառիկ հանգամանքներում, երեխան ձերբակալվում է մեծահասակների բանտում, նա պետք է հասանելիություն ունենա բոլոր սոցիալական, հոգեբանական և կրթակա ծառայություններին, որոնք հասանելի են երեխաներին համայնքում, և պետք է պահվեն մեծահասակներից առանձին տարածքում:

Մանկահասակ երեխաներ [Կանոններ 34.4*, 36]

Ձերբակալված կանանց ծննդաբերությունը պետք է միշտ կազմակերպվի բանտից դուրս: Եթե, բացառիկ հանգամանքներում, նրանք ծննդաբերում են բանտում, պետք է տրամադրել ամբողջ անհրաժեշտ աջակցությունը և

միջոցները: Մանկահասակ երեխան կարող է մնալ բանտում ծնողի հետ միայն եթե դա բխում է մանկահասակ երեխայի լավագույն շահից: Նրանց չպետք է վերաբերվել որպես ձերբակալված անձ և պետք է հատուկ դրույթով ապահովել մսուր և համապատասխան կացարան՝ պաշտպանելու նրանց բարեկեցությունը:

Օտարերկրյա քաղաքացիներ [Կանոն 37*]

Պետք է պոզիտիվ միջոցներ ձեռնարկվեն՝ բավարարելու օտարերկրյա քաղաքացիների առանձնահատուկ կարիքները (ավելի մանրամասն պահանջների համար տես Եվրոպայի խորհրդի՝ օտարերկրյա բանտարկյալների վերաբերյալ առաջարկությունը՝ *Լրացուցիչ աղբյուրներում*): Անհրաժեշտ է ձեռնարկել քայլեր՝ հեշտացնելու նրանց կապը ընտանիքի և բանտից դուրս ցանցերի հետ, ինչպես նաև անձի համաձայնության դեպքում, դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցիչների հետ:

Էթնիկ կամ լեզվական փոքրամասնություններ [Կանոն 38]

Հատուկ պայմաններ պետք է ստեղծվեն՝ բավարարելու էթնիկ կամ լեզվական փոքրամասնությունների կարիքները (օրինակ՝ մասնագիտացված թարգմանչական ծառայությունների կամ մշակութային, սննդային կարիքներին ադապտացվելու միջոցով – տես Ֆիզիկական բարօրությունը): Որքան հնարավոր է գործնականում՝ անհրաժեշտ է թույլ տալ տարբեր խմբերի մշակութային պրակտիկաների շարունակությունը բանտում:

Վերապատրաստում և բանտի կառավարում

Սկզբունքներ [Կանոններ 71-75 և 83]

Բանտի կառավարումը պետք է ուղղորդվի մարդու արժանապատվության հանդեպ հարգանքով և վերաինտեգրման նպատակով: Աշխատակազմը պետք է մշտապես իրականացնի իր պարտականությունները այնպես, որ բանտի բնակչության համար լինի լավ օրինակ և վայելի նրանց հարգանքը: Պետք է գոյություն ունենան կազմակերպական և կառավարման համակարգեր՝ ապահովելու, որ բանտերը համահունչ լինեն մարդու իրավունքների չափանիշներին:

Բանտերի կառավարում [Կանոններ 82-89]

Աշխատակիցները պետք է նշանակվեն առանց խտրականության և պետք է ներառեն մասնագետներ, ինչպիսիք են հոգեբույժները և ուսուցիչները, և պետք է լինի տղամարդկանց և կանանց հավասարակշռություն: Տնօրենը, ղեկավարությունը և աշխատակազմի մեծ մասը պետք է կարողանան խոսել բանտարկյալների մեծամասնության լեզվով:

Բանտերի վարչակազմերը պետք է աշխատեն կառավարության հետ՝ ապահովելու, որ մշտապես լինի բավարար աշխատակազմ: Սա ներառում է տնօրեն, ով նշանակված է լրիվ դրույքով և ունի բավարար որակավորում:

Վերապատրաստում [Կանոն 81]

Բանտի ղեկավարությունը պետք է ապահովի բանտի աշխատակազմի մշտապես բարձր չափանիշներ՝ այն գիտակցմամբ, որ նրանք իրականացնում են կարևոր հանրային ծառայություն: Բանտի աշխատակազմը պետք է կարողանա պահպանել և բարելավել իր գիտելիքը կարիերայի ողջ ընթացքում՝ հաճախելով վերապատրաստման և զարգացման դասընթացների: Հատուկ վերապատրաստում պետք է տրամադրվի այն աշխատակազմին, որն աշխատում է կոնկրետ խմբերի հետ, ինչպիսիք են երեխաները, երիտասարդ չափահասները, օտարերկրյա քաղաքացիները, կանայք կամ տարեցները:

Դասընթացները պետք է ներառեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի, Եվրոպական բանտային կանոնների, Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոնվենցիայի և մարդու իրավունքների այլ չափանիշների վերաբերյալ ուսուցում:

Տեսչական ստուգում և մշտադիտարկում

[Կանոններ 92 և 93]

Բանտերի՝ պետական և միջազգային օրենքներին, այդ թվում՝ Եվրոպական բանտային կանոնների դրույթներին համապատասխանությունն ապահովելու համար, դրանք պետք է կանոնավոր ձևով ստուգվեն պետական մարմնի կողմից և մշտադիտարկվեն անկախ մարմնի կողմից, որի բացահայտումները պետք է հանրայնացվեն:

Մշտադիտարկման անկախ մարմինները պետք է ունենան հասանելիություն բանտի բոլոր հատվածներին և նրանց պահանջած բոլոր փաստաթղթերին: Նրանք պետք է կարողանան այցելել բոլոր բանտերը և կարողանան ընտրել որ բանտերն այցելել՝ նախապես դրա մասին չտեղեկացնելով կամ այլ կերպ: Նրանք պետք է կարողանան ընտրել ում հետ հարցազրույց անցկացնել և իրականանել գաղտնի հարցազրույցներ ձերբակալվածների և աշխատակազմի հետ: Ոչ ոք չպետք է պատժի ենթարկվի մշտադիտարկման անկախ մարմնին տեղեկություն տրամադրելու համար:

Մշտադիտարկող անկախ մարմինները պետք է լիազորված լինեն առաջարկություններ ներկայացնելու, որոնց պետական մարմինները կամ բանտերի վարչակազմերը պետք է ողջամիտ ժամկետում հանրայնորեն պատասխանեն՝ ձեռնարկվող գործողությունների առնչությամբ:

Լրացուցիչ աղբյուրներ

Եվրոպայի խորհուրդ, *Բանտի և պրոբացիոն ծառայության աշխատակազմի ընդունելության, ընտրության, կրթության, վերապատրաստման և մասնագիտական զարգացման վերաբերյալ ուղեցույցներ*, 2019 թ. (CM(2019)111-add). www.coe.int/en/web/prison/conventions-recommendations.

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե, *Պատժամիջոցների կամ այլ միջոցների ենթակա անչափահաս իրավախախտների վերաբերյալ եվրոպական կանոններ*, 2008թ. (CM/Rec(2008)11). www.coe.int/en/web/prison/conventions-recommendations.

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե, *Օտարերկրյա բանտարկյալների վերաբերյալ Նախարարների կոմիտեի կողմից անդամ պետություններին տրված առաջարկություններ*, 2012թ. (CM/Rec(2012)12). www.coe.int/en/web/prison/conventions-recommendations.

Եվրոպայի խորհուրդ, *Կոնվենցիաների ժողովածու, Բանտերի և համայնքային պատժամիջոցների և միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ և բանաձևեր*, հուլիս 2020 թ. www.coe.int/en/web/prison/home.

Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե (ԽԿԿ), *Չափանիշներ և գործիքներ. բանտեր*. www.coe.int/en/web/cpt/standards#prisons.

Մարդու իրավունքների եվրոպական դատարան, *Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի նախադեպային իրավունքի վերաբերյալ ուղեցույց*, վերջին անգամ թարմացվել է 2021թ. ապրիլին: www.echr.coe.int/Documents/Guide_Prisoners_rights_ENG.pdf.

Միջազգային բանտային բարեփոխումներ, *Նելսոն Մանդելայի կանոնների վերաբերյալ կարճ ուղեցույց (վերանայված Նվապագույն ստանդարտ կանոններ)*, 2016թ. www.penalreform.org/resource/short-guide-to-the-nelson-mandela-rules.

Միջազգային բանտային բարեփոխումներ, *ՄԱԿ-ի՝ Կին իրավախախտների և բանտարկյալների վերաբերյալ բանգկոկյան կանոններ. կարճ ուղեցույց*, 2013թ. www.penalreform.org/resource/united-nations-bangkok-rules-women-offenders-prisoners-short.

Միջազգային բանտային բարեփոխումներ, Հոգեկան առողջությունը բանտում. կարճ ուղեցույց բանտի աշխատակազմի համար, 2018թ. www.penalreform.org/resource/mental-health-in-prison-a-short-guide-for.

Penal Reform International կազմակերպության մասին

«Penal Reform International» (PRI) կազմակերպությունը ոչ կառավարական կազմակերպություն է, որը գործում է համաշխարհային մակարդակում՝ խթանելու քրեական արդարադատության համակարգերը, որոնք ապահովում են մարդու իրավունքները բոլորի համար և չեն վնասում: Մենք աշխատում ենք՝ դարձնելու քրեական արդարադատության համակարգերը ոչ խտրական և պաշտպանելու անբարենպաստ պայմաններում գտնվող մարդկանց իրավունքները: Մենք իրագործում ենք մարդու իրավունքների գործնական ծրագրեր և աջակցում բարեփոխումներին, որոնք դարձնում են քրեական արդարադատությունը արդար և արդյունավետ:

«Penal Reform International» կազմակերպությունը (PRI) գրանցված է Նիդերլանդներում (գրանցում no 40025979), և գործում է ողջ աշխարհում՝ բազմաթիվ վայրերում գրասենյակներով:

www.penalreform.org

PENAL REFORM INTERNATIONAL

FAIR AND EFFECTIVE CRIMINAL JUSTICE

Penal Reform International
Գլխամասեր

The Green House
244-254 Cambridge Heath Road
Լոնդոն E2 9DA
Միացյալ Թագավորություն

The Hague Humanity Hub
Fluwelen Burgwal 58
2511 CJ Հաագա
Նիդերլանդներ

info@penalreform.org

@PenalReformInt
@Penalreforminternational

Penal Reform International
Կենտրոնական Ասիայում

Syganak str. 29
Աստանա
Ղազախստան

96 Toktogul street, office 7
Բիշքեկ
Ղրղզստան

pricentralasia@penalreform.org

Penal Reform International
Հարավային Կովկասում

Chavchavadze Avenue
1st Lane, Block N6, 3rd entrance, apt. N61
Թբիլիսի 0179
Վրաստան

Penal Reform International
Միջին Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում

22 Amro Bin Dinar
Ամման
Հորդանան

priamman@penalreform.org

Penal Reform International
Ենթասահարյան Աֆրիկայում

Plot 8, Kisozi Close
Kisozi Complex
Nakasero
Կամպալա
P.O. Box 11455
Ուգանդա

africa@penalreform.org

WWW.PENALREFORM.ORG